

ՅԵՐԱՅՈՒՆ  
ՆՈՑՔՈՒՄՈՅՅ

# ԽԱՐՍԿԱՍՏԱՆ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, Օգոստոսի 20-ին. Թիֆլիս. №34.  
Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ն



Роттер.  
А. Г. Быхова

ինչ է սպասում Պարսկաստանին, եթե «Խեղճ» չմնան եւ միշտ կռիւ դալմադաւ անեն—  
ինչպէս վերջին երեք տարին.

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

# ՄԱՔԱԲԱԿ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի  
ԼՈՅՍ Է ՏԵՍԵՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բերք բոլոր ընթացիկների համար

«ԽԱՔԱԲԱԿ» շաբաթընթացիկ թիմադրեցնում է, շաբաթընթացիկ էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիիդ ուզի: Հասցէն՝ Тифлисть Музейный пер., редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»  
Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան



Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձեր կարգացողներին պէտք է նկարենք գլխիվայր:



«ԽԱՔԱԲԱԿ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ՕԳՈՍՏՈՍ 30 օր

# 20

Суббота **ՀԱՐԱԹ** Ծաղոտո  
Լուսնի 7

- Շաբթեղարձ Փէթիսյոբի. տօն զբերք աղաժարողոց՝ կանացամիտ արանց, հարսանիք թաթարեանի. կարին պակիր և անսէր սրտով:
- 21 (կիր.) Յիշատակ անյիշատակ մարտիրոսաց և ազգային քաջալ գործչաց:
- 22 (բ. շ.) Եօթնօրեակ Խօջիվանքեան կեղծ լացից և քուչա-քուչա անկեղծ պաշտաց այսօր սկիզբ առնի աւուրք մեծի տանջանաց, որք ի գիմնադիտիս և յուսուժարանս վասն բնութեանց և էքստերն չարչարանաց:
- 23 (գ. շ.) Տօն ամենայն սրբոց հայոց ընծի գրաչալի Արշակի Յարութիւնեանց, զգեղատեսիլ Արշալիբի Շահխաթունեանց և զայլոց:
- 24 (դ. շ.) Պահք. այսօր պիտոյէ միայն զձմեռուկ ուտել և աղօթք անել:
- 25 (ե. շ.) Սրբոցն սուտ մարգարէից և անճիշտ պատմաբանից հայոց, որք եկան և մեան և կրգան և կրգանս:
- 26 (ուրբ.) Տարեղարձ անցեալ տարւայ սեպտ. 26-ի.— որք կերան՝ կերան, որք չկերան քաղցած մնացին. ի մէջ կեանքի ևս այսպէս լինի:

Տոմարագէտ և օրացոյցագիտ  
Աղբարսոս արհ-վարդապետ.

## ԷՆՑԻԿԼՕՊԵԴԻԱ

(Տե՛ս Ա.— 2. տատերը)

է.

Է հայերէն այբուենի 7 ըզ տառն է և լիակատար ձայնաւոր է (բայց ոչ ուպրաւայի), որը աւելի պարզ արտասանում են թօխյօ ձու կուլ աւած տիրացուները չաղ ննջեցեալների առաջ Շիրաջխանայի վերելքը բարձրանալիս:

Է՛՛՛՛՛... բացականչութիւն է, որ գործ է ածում Մակար Զմշկեանը բոռ «Իմացիին» կանչելիս «Է՛՛՛՛՛... այ Իմայլլ, այ Իմայլլ, կոյնը բերւա սիր, բերւա սիր»:

Է՛՛.— Ասում են խոնարհներին, որոնք չոչ լսեն ուկամք, բայց լսեն թիկամք: Եթէ այդ բառին աւելացնէք խամնեան և քերականական կանոններով է-ն փոխենք ի-ի, կըստանանք ազգի պարծանք և դօքտոր փիլիսոփայ Բախշի Իշխանեանին, որը քաջարար մկրատի մի-մի հարւածով կտրատել է յայտնի գրադարանների հազաւգիւտ զըրքերի թերթերը և հիմա էլի բաղնուտ նըստած գլխին հինա է քսում:

Է՛՛մակիր.— Վրացերէն բառ է, առաջ է եկել առաջին երկու տառից և նշանակում է սասանայ, որը յայտնի է իր՝ դէպի մարդկային գանգերն ունեցած գովական ոյժով: Այդ նկատելի է մանաւանդ կաթուղիկոսական ընտրութեանց ժամանակ:

Է՛՛զէքա.— Հին գրաբարից մնացած բառ է և նշանակում է՝ կարելի է: Այդ բառը աւելի շատ գործ են ածում մի քանի հայ ուսուցիչներ, որոնք տարւայ վերջին պիւնդ բռնելով որևէ դպրոցից, ման ևս գալիս մի ուրիշը ասելով. «Է՛՛զէքա մի ուրիշ աւելի

լաւ տեղ ճարինք, հինը խում կայ ու կայ»: Էլի-կուլի.— Գասպար Կալատուզովի առաջնորդողի վերջարանն է: Այդ բանը յաճախ գործ է ածում մանաւանդ ամառը, երբ շոգերի տաքութիւնը հասնում է եռօցման սասիճանին:

Էլրթօքա.— Միութիւն-հաւասարութիւն: Սօցիալական բառ է, որ տոպիկն անգամ գործ է ածել Բէրէլը ժօրէսի և Մարքսի հետ Օրթաճալայում քէֆ անելու ժամանակ: Այդ բառը վրացի սօցիալիստները ձմեռը ստոցրին թթու գնելու և ամառը հալեցրին կվասի համար: Ով չի հաւատում թող գնայ հարցնի «Новая Рѣчь»-ի խմբագրութեանը:


Էնցիկլօպեդիա Փառեմուզ



## ИЗОБРАТЕТЕЛЬ БОДРАՆԵԱՆ

Изообрѣтатель Бодраниан... Մի ժամանակ այս սանգիլիկը ուրախ մարդկերանց օրերի ամենամտերիմներից մէկն էր, որ հազար ու մի տեսակ գործեր ձեռնարկելուց և անյաջողութեան հանդիպելուց յետոյ՝ այժմ ամեն բանից էլ յետ էր մնացել:

Չինուրական վարժարանից վոնդւել էր իր ծուլութեան, շայտութեան, արբեցողութեան և լացարարների կամեկու պատաճառով: Եղել էր թատերասէր (կոմիկ-բուֆ) և



ապա թողել բեմը, խիստ բազմից, ան-  
շնորհութիւնից և հասարակական հակա-  
կրանքից ստիպւած:

Արեւ էր գրագրութիւն մի հիմնարկու-  
թեան մէջ, ուր մի խնդրագիր գրելիս յա-  
նուն նահանգապետի, վերը, տիտղոսի փո-  
խարէն գրել էր—«Дорогому Губернато-  
ру...»

Գրել էր մի գիտնաս «Դարախան» անու-  
նով, որի գործը, անձանց անունները բըռ-  
նել 12 կիսածալ թերթ, իսկ ամբողջ պիէ-  
սը 11 և կէս:

Պաշտպանել էր դատեր այս ու այն հաշ-  
տարար գատաւորների գիւանատներում  
(Աստուած պաշտպանել համարէ, աչքը շինե-  
լու՝ տեղ յօնքն էլ էք փչացնում...) և պար-  
գեատրուել էր «Беззубы адвокатъ» մակա-  
նունով:

—Եղել էր ինամակալ այրի Դարգակ-  
եանի անչափահաս գաւաղների ու նրանց  
կայքի վրայ և ձեռքն անցած փողերը  
խորմի պէս խժոկ ու կերել էր Горгид-  
жазов-ի այգում ու Կուրզգէլովի գինե-  
տանը...

—Թաւրիզեցի մի շաշ մարդուց մի երաւ  
կին էր խել ու բերել իր տանը նստացրել,  
կոչելով նէրան՝ «Տիկին-Չան»: Առաջին  
անգամ տեսնելիս, ինձ թւաց, թէ իր մայ-  
րն է, յետոյ լսեցի, որ իր կեանքի կոնդ-  
րարանը ընկերուհին է:

Ինքն էլ մի մազապուրծ երիտասարդ էր,  
անպաճոճ հագուստով, առողջ ու հաստա-  
վիզ, մշտական ծիծաղը բերանին... ասում-  
ներից շատը թափւած, եղածներն էլ սևա-  
ցած, փող ունեցած ժամանակ «Солидная»,  
չունեցած ժամանակ՝ «Голубка» պապիրոս-  
ների ծխից...

Ապրում էր Քոն ասին մի բարձր տան  
աղքատիկ մանսարդայում, որի ոլորտուն  
ու դժոխային սանդուխտները բարձրանա-  
լը տևում էր կէս ժամ և յաճախ այցելուն  
շփոթեցնում գիզզագնեքից, սւրիշի տունն  
էր մտնում և աւանակի... պէս մնում պե-  
շացած:

Մի գեղեցիկ օր, թեք ընկած պատուհա-  
նիս առաջ, տեղաւորւած ձգձիմ գահաւորակի  
վրայ, նայելով դէպ պղտոր հոսող Քուրը,  
սկսաւ մտորել... Նախ վճռեց տէրտէր  
զառնալ, ապա գործակալ Վարշավայի կեն-  
զանի ապրանքների տոնավաճառներում,  
ապա պահապան վայելքների գերի կանանց  
շիրմաների յետև... Վերջը, վեր ցատ-  
կելով տեղից, այնպիսի ուժեղ բռունց խը-  
փեց տախտակէ պատին. որ վայր գլորե-  
ցին վրան իբրև գարդ կախւած իր խցանից  
շինած ձեռագորգ պէյզաժն ու փայտասուն-  
կի ահագին կտորը...

Эврика! գտաւ:

Վճռեց դառնալ Изобретатель՝ շինել մի  
զարմանալի ու անօրինակ նաւ, որ ծովերի  
ու գետերի վրայ շրջեր մի փոքրիկ զսպա-  
նակի ղեկավարութեամբ, որպէսզի ջրի կա-  
տաղի ալիքները, սարսափով հպատակէին  
այդ մի հատիկ զսպանակի պտոյտին, որ

սուրալիս էլ նաւը միաժամանակ ինքնի-  
րան որսար լաւ-լաւ լորոնքը, ճանարներ.  
վճուած ու ծրագրւած էր:

Հետեւեալ օրը, առաւօտեան, կանուխ  
զարթնելով քնից, նա գողացաւ իր երաւ տի-  
կինի փողամանը, որի մէջ հաւաքւած էր  
նէրա ամբողջ խնայողութիւնը կոպէկ-կո-  
պէկ, ապա ծախեց նէրա քում ու մատա-  
նին, ու մինչ ժամը 12-ը նրա գրպա-  
նում գոյացաւ 18 ուրբի 64 կոպէկ և ու-  
րախ-ուրախ գիմեց դէպ Երևանեան հրա-  
պարակ, կանխապէս մտնելով Փալասի  
գինեպահեստն ու ոչնչացնելով մի երկու  
շիշ գինի:

Գաւառական օրապակաս վարժապետնե-  
րի ակումբում, այսինքն Երևանեան հրա-  
պարակում, հանդիպեցի ես նրան. (այդ  
այն ժամանակն էր, երբ պատր դերասան  
Մրոյրը, մարդաթող եղած անգրագէտ կա-  
նանց, յետին մտքերով, շարունակ փորձի  
էր հաւաքում Բարախի թաղում. իսկ թէ  
ինչ «փորձի» այդ ինքը գիտեր, մէկ էլ իր  
կօլիեզա սատանան...)

Հա... բարե, ասացի, պ. Բոզրաշեան:  
—Բարե, բարե...  
—Ուր ես շտապում, այ տղայ...

—Օ՛, ես այժմ մեծ մարդ եմ—ասաց նա  
թութունի ծուխը կուլ տալով — յար-  
գանքով խօսիր, գնում եմ գնելու անհրաժեշտ  
նիւթեր մի հնարագիտութեան համար, որն  
արդէն ծրագրել եմ, պիտի շինեմ միայն  
մօղելը փոքր չափով, ստանամ պատենտ  
ու պրիվիլեգիան և այնուհետև ես ոտիցս  
մինչ գլուխ կապահովեմ, դարդ մի անիր  
բարեկամս: հայկական էդիտորը քեզ էլ կօպ-  
նէ մի քանի հատ կատենկայով (100-ոց):

—Բայց չէ որ դու չգիտես՝ քիմիա, ֆի-  
զիկա և...

—Է՛հ... այդ գիտութիւններին ես այն-  
քան էլ նշանակութիւն չեմ տալիս. կշինեմ  
և կըտեսնես. դեռ ոչ ոքի չեմ յայտնում  
հնարագիտութեանս բարդ գաղտնիքը—ա-  
սաց նա խիստ հեղինակաւոր ձայնով ու  
ցուցամատը վեր բարձրացնելով—Իէ ա-  
ռայժմ ցտեսութիւն, ես շտապում եմ. այ-  
սօր ոտից-գլուխ դառել եմ մի մեքենայ.  
գնում եմ գնելու թիթեղի թերթեր, ալիւ-  
մին, տախտակներ, բարակ շղթաներ, մուրճ,  
մամուլ, գնդան, խարտոց, ունելիք, ուտե-  
լիք... երբ արդէն պատրաստ կըլինի իմ  
լաբարատորիան, կըգաս միասին մուժուժ  
կուտենք. ց՛... ց՛...

Երկու տարի անց, ես կրկին հանդիպելով  
նրան, նկատիցի թեկն կարւած սգաւորու-  
թեան նշան—սև կապն և ցաւելով, լսեցի  
իր հարագատների կորուստը, ի միջի այլոց  
իր երաւ տիկինի մահը, որից յետոյ ԻՅՕ-  
Բրѣтател-ի լիակատար ինամքին էին մնա-  
ցել իր մեղաւոր սիրոյ որբացած երեք ար-  
դիւնքները, երեքն էլ աղջիկներ, երեքն էլ  
խորթեր, (դրա հօր տունը չքանդւի) երեքն  
էլ քաջալ ու թօփալ...

Չնայելով այդ բազմաւոր դժբաղդութեա-

նը, նա հիմա ուրիշ մարդ էր դարձել. տե-  
ղափոխել էր իր ողորմելի անսարգայից,  
ժապաւէնը պոկւած ու քլափնաբլիթաբլիթ  
ւած գլխարկին՝ փոխարինել իր հիմա պա-  
նաման ու բերտելի սքանչելի շապօն, քի-  
թը թամբել էր աւստրիական pince nez-ով.  
խոզի ճարպի տեղ հիմա օժուժ էր դէմքը՝  
զանազան անուշահոտ օտոմորֆոզա-ներով.  
Կազանի և Սդնախի օճաների տեղ՝ գործ  
էր անում կէզրանի «Jasmin de Corse» և  
«Bouduet Manou Lescout», քիթը՝ էլ առաջ-  
ւան պէս մատերով չէր սրբում, այլ խայ-  
տերանգ մետաքոէ թաշկինակով, որի տու-  
տերին միշտ կաթացնում էր անուշաբոյր  
հեղուկներ և քիչ էլ բեխերին քսում... Ա-  
ռաւօտներն էլ առանց այլևայլութեան կար-  
դում էր «Всемирная панорама». հայերէն  
թերթեր այժմ էլ ձեռքը չէր առնում, որով-  
հետև փող ունէր...

Ունէր Ֆուտ-բոլի կօշիկներ, հեծանիւ,  
խաղատոմսեր, մի լաւ գանգրահեր շուն,  
кажос-ի ձոխապաճոյն ձեռնափայտ՝ գլխին  
бразильский рог-ից քանդակած մի եղնի-  
կի գլուխ և վրան ոսկէ մէնագրեր և  
այլն: Նա առաջւան պէս էլ արագ քայլե-  
րով չէր գնում Մետեխի բանտի տակ ոչ-  
խարի խաշած գլուխներ ուտելու սխտորով,  
այլ յամբաքայլ դիմուն էր դէպի «Անօն-  
նա» ընը, ընը, կեղծ հպարտութեամբ հա-  
զալով, անուշ էր անում լաւ լաւ խորտիկ-  
ներ, յետոյ խմում էր «պոլուշ» ու «Ալաշ»  
վրան էլ մի լաւ խնձոր ուտում (նրա կար-  
ծիքով խնձորը ոչ միայն առողջարար, այլ  
և խելը շտապնելու յատկութիւն ունէր):  
Մի խօսքով զարմանալի կերպով փոխել էր  
այդ մարդը. նախկին քնձոտ Բոզրա-  
շեանը մեռել էր, հիմա ծնւել էր նրա տեղ  
մի անգլիական լօրդ, մի Չեմբերլին...

Օրը ուրբաթ էր. հիւրանոցիս աղախին  
կարմրաթշիկ Малаша-ն, յանձնեց ինձ մի  
ահագին այց-կարտ, որի մի երեսին՝ ծոյլ  
գրչի մի երկու շարժումով մակագրւած էր  
«Մեծ. պ. Աւանախրիտ. շնորհ բերէք ինձ  
մօտ այսօր երեկոյեան 7 ժամին.» իսկ միւս  
երեսին՝ տպւած էր խոշոր տառերով «Ա.  
Բոզրաշեան» իսկ ցածը՝ կուրսիվ—«Հնա-  
րագէտ, նաւագործ, դրամատուրգ, մասնա-  
ւոր հաւատարմատար...»


Էլ ինչ ասել կուզէ, երեկոյեան այց գը-  
նացի:

Առաջին պատահած սենեակը, իր լաբա-  
րատորիան էր, ուր ընկած էր խղճուկ նա-  
ւի կմաղքը ժանգի ու փոշու մէջ կորած և  
ուր մի գաճաճ երիտասարդ Մագութեան ազ-  
գանունով, ըստ երեկոյթին իր գործավարը,  
խնդրեց նստել ինձ ու սպասել, ասելով՝ թէ  
«Պ. Изобрѣтател-ը իր առանձնասենեա-  
կում է և խկոյն կըգայ...» Изобрѣтатель  
բառը շեշտեց մի առանձին հեզնանքով...

Իմ հարցերին նա պատասխանեց, որ Բոզ-  
րաշեանը հազար տեղերից քանի՛ քանի՛  
անգամ խոշոր գումարներ է ստացել իր



—Այ թէ անբաղաբաւարի է—այնպէս է նստել, կարծիք, աշխարհ, մենակ ինքը լինի, չի էլ  
ասում, որ այստեղ օրհորդ է նստած, որին յամենայն դէպս տղամարդիկ պարտ են զբաղեցնելու:



նաւը շինելու և միշտ էլ վառնել է իր իսկ հանձնարարի վրայ, թողնելով գործը առանց հետեանքի, գրեթէ մոռացութեան տալով շինութեան մանրակրկիտ գաղտնիքները...

—Ասել է թէ երկու տարւայ ընթացքում, միայն այդ կտորներն են եղել դրա շինածը...

—Ո՛չ պարոն, մէկը աւարտեց անցեալ տարի և փորձելու համար բաց թողեց Քըռուս, ինքը հարբած էր այդ ժամանակ և ի հարկէ ջրի ուժեղ հոսանքը փակցրեց, տարած... Իրանք, այն հանգուցեալ նախ բեկորներն են, որ թափփփած են այստեղ... չէ, գլուխ գալու բան չի... համա այլևս չեն էլ հետաքրքրում նրան հնարագիտական պրօբլեմները...

—Իսկ այժմ ի՞նչով է զբաղւած առանձնասենեակում...

—Է՛ն միք հարցնի, վերջերս մրուան իր հարուստ բարկեամենեքեց մի քանիսը և նրանց ամբողջ կարողութիւնը անցաւ իր ձեռքը ու հիմա քաղաքիս զեղեցիկ սեռի միակ «չանտըկերն» է դարձել և իր կարգի առանձնասենեակը՝ Մահամեղի շեննաթը դարձրել... հաւաքում է ամեն օր ինչ որ Հայկանոյշներ, Անուշներ ու Մանուշակներ... և քեֆ քաշում... ուրիշ ո՞չինչ, երևի ձեզ էլ հենց այսօրւան օրգիսիին մասնակելու համար է հրաւիրել:

Մինչ այդ, առանձնասենեակից լսում էր Իզօբրօտել-ի խաղաղ ձայնը, որ հրգում էր...

Коперник цѣлый вѣкъ старался—  
Что б доказат земли вращение,  
Дурак он! если бы напивался—  
То тогда не было бы сомнѣние...  
Так наливай, брат, наливай.  
Все до капли выпивай...

Առէ լուող տրինկ-ներին աղմուկ ու հարացրոցներին փոքր ինչ ունկնդրեց յետոյ, հենց վեր կացայ, ուղում էի գնալ, երբ ներս ընկաւ Իզօբրօտել-ը սիգարը բերանին, գրգռւած մազերով ու կարմրած աչքերով ու ինձ տեսնելով, թեւս գրկելով, բացականչեց—

—Բարեկամս, ես քեզ էի սպասում, գընանք, գնանք... այստեղ ազարտ կայ...

—Կնաց—ասացի ես—երևի մեծ գումարներ հասաւ քեզ համ—որ...

—Է՛ եղբայր, վերջանում է, այո, համարեա թէ վերջանում է, այդ էլ կերայ... այդ էր չկորուցացայ պահել...

—Օ՛ կնոջ... կնոջ... մի երբ ևս կայ—հըռնաց նա—Լարսարատօրիս փակում եմ... կատարեալ Ликвидация իմ յիմարութեան... շուտով ամուսնանում եմ մի ոսկէ եւայի հետ, գնում եմ երևան—թեմական դպրոցի և դատարանի վկայական ձեռք բերելու և... և ձեռնադրելու հօրս ծխի վրայ քահանայի, այսինքն поповъ или попка... ծիծաղելի է քայքայ ինչ արած... ծուխը կորչում է Գիտես այնպիսի մի հրաշքի վարձ

եմ տեսել Кафиев-ի կրպակում ցուցադրած...

Ա՛յ թէ հրաշալի սքեմ կըլինի հա...  
Մարիկ

\* \* \*

Հարաֆի պէս սալթ փշիս կը  
Սըսի մէջ զորդ էլ հառնիս կը  
Անգամիս յերկան լեզու  
Ես քու դատարկ ջէբդը ղուրբան:

Ջէբէդ լիքը զանգին մարդ իս  
Աղբաներուն շատ կը բերթիս,  
Բազի բազի բեթթակ կուտես,  
Կուպայ դագինսակին ղուրբան:

Ներկարարը փողը կուզէ,  
Քար կրողը հախը կուզէ,  
Հերիք խարես սող խեղճերին,  
Անխիղճ անգութ սրտիդ ղուրբան:

Խոշոր խոշոր շատ բրթեցիր,  
Բրթածդ ինքը խրթեցիր,  
Ինչ ցանկցիր է՛ն քաղեցիր,  
Ինչ քու լուպազ լեզուդ ղուրբան:

Հազած կապու՛ծ ժող գուգաս կը:  
Դարտակ փորով գկոտաս կը,  
Հերիք փշես, խալխին խարես  
Սուտ-խօտան բերնիդ ղուրբան:

Պզտիկ սու՛մով խամու՛թ բացիր,  
Երդումով ապրանք ծախեցիր,  
Նիսիան քո՛ւ քո՛ւ գրեցիր,  
Կարճ արշին դար կշեռերիդ ղուրբան:

Գնացիր յուսում արնելու,  
Շէնք ու շորք սուփորելու,  
Դարտակ գլխով ձեր տուն էկար,  
Վարակիչ ցանքուդ ղուրբան:

Լուսաւորւած օրիորդ ես,  
Զպակեած սիրուն մէր իս...  
Հօրդ մօրդ սքեքը լոյս,  
Անէր քաղիկներուդ ղուրբան:

Հազած կապաղ ծաղլի խանում  
Աջք ու ունքը շատ ես ներկում.  
Դոշիդ մէջը քամբակ կոխում.  
Թազայ սիրականիդ ղուրբան:

Պսակւած ես—կնիկ ունիս,  
Ջէյրանի պէս խանում՝ ունիս  
Շատ գիշերներ դուս կը քնիս.  
Դնսավոր խամումիդ ղուրբան:

Ո՛չ եղ ունիք ոչ սղ պանիր  
Յամար հաց կեր, գետնին քնիր.  
Գրկող դիր թանկ շխտիսյ,  
Ես քու ներկած թշիդ ղուրբան:

Տան տիկին ես՝ մօլնի մօլնի կոյն  
Էրեկիդ շորերը չկարես  
Մի սպուր էլ էփել չգիտես  
Նեղ շալվար դարիիդ ղուրբան:  
Վարայի Մարգար



Վանաստականական շրջանում

—Ինչպէս չեմ ամանչում Արշակ Կարապետովիչ, որ մի անգամ գոնէ մաքուր շոր չես հագնում, վաճառական մարդ ես, ամօթ է, տեսնում ես կինդ ինչ մաքուր և ճաշակով է հագնում:  
—Ի հարկէ էդպէս էլ պիտի լինի, կինս հագնում է վերջին մօլայով, ինչպէս որ ժողովներում ձեռք ցոյց են տալիս. իսկ ես հագնում եմ մեր խոնուրի գլխուքը հաշտեցրի ցուցումով:

Անասկանալի է

—Իսկապէս անասկանալի է, ինչու մեր գաւառներում աղջիկ մարդու տալիս փեսացուն փող է տալիս անորը. իսկ մեր քաղաքներում ընդհակառակը, ոչ ոք չի ուղում աղջիկ առնել, պահել, մինչև որ փող՝ օժիտ չունենար:  
—Շատ պարզ դաւաններում երբ մէկը կին է տունում, նա իրեն ընկեր է վերցնում. նրա համար էլ փող է ծախսում, իսկ մեզանում այդպէս չէ, մեզանում եթէ մէկը ուղում է ամուսնանալ, աղջիկ առնել, նա առաջուց գիտէ, որ այդ աղջիկը ստատիք բեթար է, ուստի և իր կամաւ չարչարների համար փող է պահանջում:

ՇՕՇԻԱՅ ՂԱԼԷՆ ԶԱԴԻՐԱՆ ՈՒ ՇԻԼԱՊԱՆ

Հներակ է՛ն օրերին, վեր Ղալին կնանկըը սիպտակ չադրաները քցած, քէթ ու բերան ծածկած, ժամին քիսում, վախվախելաւ մըտնում, ծօնդըր տիկնում, երեսներն տափերը քսում՝ մեխկերից թիթեացած տօն ետ տանում:

1884 թւից սկսած մեր աշքի լիւս նաւաղըչանց Զատի-բաղին էլի չադրին տակին մին քանէ աղճկիւրք գլխին հըւարած կար ու ձիւար գաս տամ. ես էլ հայա նօրի կոչումը ստացալ վրթարիդ արունալու է՛ն, է՛ն վախալ խեր բարաքեաթ կար, մեծ ու պիծիտու պատիս հիւրմաթ կար, քըծերին իրեսներումը արուս հայեաթ կար, էլ հինչ

զբոխը գլխով, կրթեցող, մին հանց վախտար, վեր մարթիք հրամաններին թա կոտըր ընդին, կրնանէք, աղճկերքն էլ ըսես մըռնինն պեցած խօսին: Էս թըրը- գումն ար, վեր տեսուչ վասակ Բարաջանու- վը օրիորթ Ալիխանովին (մին խոնարհ աղճիկ) թիփլիզից բերաւ Ղալան, վարժուվի շինեց Ձառի-բաջուն շիջումը: Շատ մարթ ուշուց ար տամ. հու վէր իրան աղճկանը թողումար շըլապաւ քիւչաւը քինայ սու- մարան կհայ. ամա հասց ճիլիլ աղաթ տեսաւ, վեր մարթիք օգում ին իւրանց կնանէքն ու մարիքն էլ սումարան տանին: Ալըաւ թող թող արին չաղբաները, վի- բացրին բերան ծածկելը, ու մողա շինե- ցին գլխաբացութիւնը: Էտ ժըմանակէն էլ- հա մին եօն կար, ամա էն հինչա վար- ժուվիքը էտ սումարանէն իրեքիմջի կլա- սան տիւս եկած լըպըտօկ չեշմակները աչ- քերին հաճիւճ-մաճիւճներ տեսն, լոխ բա- կեցին մարթկանց էլ մին քանէ պերօզ տար:

Ախ իստի տամ, քինիտ, վեչ ետ տեսաւ: Էս օրիւս հինչեր տեսէ իս դալումը.— ջու- սու-ջուսա շեպապաներ. մեր վեղարին դերու- փափաղու, տաշտակու, լեպեան ու ետ պրարուտիւսած մօթալու նման, էտ էլ հե- ըրք չի, մին քան է քած էլ նեղ նեղ գա- բանները կեցած, ժամանակները մալակա- նու քեալամ շինած, փուսգու Նապալեօնին փափաղը դըրած, գօշերին չբու ծծերեն կեսերը պից պից, թուրքերէն զարմացնում ին, ըսէիս ըսըիս տիրած լիսահաչի տամ, հարերը ախպերքն էլ ուրիւնալան ժընգըո- նում ծիծաղում: Ըստանց թահրին եշած էլ, հինչ տեղ փինաչի, բախկալ, խընջող ծա- խող, փափախչի թօրքեր կան, լոխ էլ, վերը

հրօկանում ին վեչեր կայ՝ մին մին մա- նէթըն տամ՝ կուր մըտնում: Էտ քշերը վեր զալէն մղակաւը նի մըտնես, մին կամենգիա կտեմնաս, վեր կողմը խշումըս մօլթանի թուրքերու փափաղնէ ա, մին էլ գօշերը պեց հայ կընանոց հրօշոց, էն վեր աղա- մարթիքն ա դումարաւ հարփած խաղն ա- նում: Վեչ կարք կայ, վեչ կանոն, չին կոտոններին էլ վեր հարցընումըս, սուումըն «կուրքին իտրըն տամ»:

Իմ աչքի լիւս կըրթեցող, 10 օր վանքս թողած դալումը կացէ, մին լեաւ պեն չի տեսէ, վեր կիրիմ, լընա մին լաւըն էն ա, վեր մարթ ու կնէկ Ղոնդաղապալները իտի շառ պեներից հեռի, քաշած քշեր ցերեկ ջիւհականոցին, որբանոցին և ուրիշ շատ պարի պենու հեռի գործումըն, ամա մինակըն, քեօմակ անող չկայ: Խեղճերը Օհանջան-բէկին բաղումը պեկնիկ սըրքե- ցին, մեծ մեծ խարջեր ըրին, աթաշպաղըղ սարքեցին, ամա մեր աղիզ բիէիզ դաշ- վիրին էտ հայերն ու թուրքերը լայիկ չա- րին քինան, երեն իւրանց շիլթան պենչար տալու իտի տեղը, հունցու կուրըմը:

Մհապ կազէթ կիրող Բեասպար կալա- սուզով, մեան օլիւմ քու բոլոր համբեա- րավըտ աչքից չբըցիս մեր Շօշալ Ղալան, հունց վեր մեր գիմլեակ Տմբլաչի Սաշա- նը \*) արաւ. թողած շըհարը էս օրումը,

\*) Տմբլաչու Սաշանին պտէք լաւ պահէիք մյ լօթիք, գուք ուզում էք, վուր ձիգ համա մուքթա մուքթա համ դհօլ ամէր համ գուռնա ու գուք կի պար գաիք էլի: Էդ գակոն- ները էլ չկան. Էշմիաձնումն էլ նրա հետ էդ թաւուր խաղ խաղացին: Էն էլ հերթէ էր. էսօրանից հրամանք ինք անում, վուր

քեցալայ՝ Դաղըստանայ շիջումըն քիթի տնում. էս էլ մեծու տարբերութիւնը թոյա- զալի եկայ վեր՝ մեր թաղա առաջն փորթ Ջաւէ նին տէմնամ, համա քինացալ ար Ամարա- սաց վանքը, սուումըն վանքին պարեկամ Պալուէն նըհեա մեծ սումարանըն շինում, մին առ ժըմանակ կըմնամ շըհարումըս վախ ու համանչը տեն տիրած, անունատկը կը կիրիմ կըզէթիթ թուրքամորթ կընանոց, աղճկերցը, չեշմակաւոր չըպըստօկ վար- ժուիքը, նրանց բէյնամուսա հօրանցն ու ախպորցը անուսները: Թա վեր էտ էլ հըզէ չպերի, տըրանց երեսին նահալթ կարթիմ էլհա Բաքու քինիմ:

Աղօթարար Դալու Մահրասա



ամասկան նրան հարիւր յիսուն օխտ թու- ման սօնյուղ տաք—իժում տեհէք թէ վունց տմբա կածէ:

Մանօթ. Գաս. կալ.

**Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն**

**— ԳՍԻՈՎԱԿԻՐ ԲԱՔՈՒԱՆ —**

(Թաղիկի և իմ սօյրաթիւս կէսը \*)

— Հա, նա ի սարմ, Գէօզալ Աղաբաջի, — բաշտամիշ տրաւ հաջին թուրքերան— Բէյ- բութով ինժինար ու փրաւ լեաշչիկս ցէք տա- լով տանց՝ «Հաջի շտօ պրիկաթիտէ...» Սեան օլլասան Գէօզալ բաջի, սեան օլլիրան քեա- ֆըր դի, անանց աջըս փունց քի, ագա- նամ ուսի սիբիրան չի վախի, ագանամ իմ շինած կազամաթիս գայմօթ օթաղնե- րան ջանս չի զարգանդեր, ջիբիս բուրա- նիկ թափանջան լափ փօրն ի կօխիլի... Համամ գէ, խօսքը մեր մէչին մեա,— վա- խացայ:

«Ետով Բէյբութով չիլածին ֆալլիւի սօյ- բաթ անիլով սս տունան ան տուն շուսա- ցինիլով տարի սպանիս: Տուռը պեապե- ցինք, մտանք նէս: Տէլէֆօնով կանչած աշ- նաներս ֆոանցուզի «Աին Ռաֆայիլ» կի-

նին քեցալ ին, քիթները կհարմրացրալ, սալանի բալաներ ին իլալ:

«Բէյբութովը քի դրանց տեսաւ, լափ Հեամադանի էշի պէս անգոջները իլըշած դիք կանչէ: Ես աշկով արի: Այ բաշուս գէօնում «Աին Ռաֆայիլ» կինի, սեան օլա- սան, Գէօզալ բաջի, սիֆթա-սիֆթա օր- բազօվի ղօշիներսս մինը մինը մին սիլլա կոփեց քի լափ Լիպիլի թօփի ծէն հա- նեց: Բամագան այն մին ղօշիներս թափե- ցին... «Եհա եմիսան—թուրջի փլով...» փարթ ա փարթ սաղ, սօլ կողքերին կոփե- ցին Բէյբութովին փալաղի պէս քեցիցին տափը, ալ օյին չմնաց քի կլլին չի տի- նան: Ետով տէլէֆօնով դւանիս արի դա- ղըստանան նոր եկած կնգան վերայ, կնիզը եկաւ, տեսաւ նշանածին շան հալի: Ասեցի քէօփօլի կզի, նշանածիս իրեօին թիքի, սս բէնամուսին տա ալ քիչ ա, ագանամ չի թիքէս քեզ ալ աթանց կանամ:

«Ետով տիրինք թախթի վերայ ու տիւս պե- րինք քիւչա, ալ չիմացա հօրէզ տարին: Տրանով ալ պըծաւ քինաց:

— Հաջի, ուղարթ ա քի թաղողները լեպզ- գի գեղաներթ ան իլալ,— հարցրի ես:

— Եօխ, սեան օլլասան, թագողները չիմ

ուսումով ղօշիներ ան, լեաւ ալ տղերք, ըլխաբօղնի գօսպօղիններ, չինով, խաշով, մէլալով, շաշկով, թափանջիով սարքած ինդիլիգէսաներ:

— Հաջի, սարմ ան սս սիկրեսները պեապ- ալ ա Բէյբութովի կնգան ցէքքով, չինքի նա տեսալ ա քի իրան նշանածը ուրիշ կնգան վերայ ա տաքացալ, տուն չի հա- ւաքըմ, աթանց ալ արալ ա...

— Սուս խօսք ա, Գէօզալ աղաբաջի, տա ան հայասըղ Իսրաֆէլի սատանութունն ա, մի հաւատալ:

— Հաջի, ուղորթ ա քի ալ շան թօղնիլի դումի չիլէն իլիս մինչև սս պեաները թեա- միզի:

— Մի հաւատալ, հինչ ա քի Իսրաֆէլին ռիշաթ վեկալած մատանիքի գործի խա- թիրան դումի չիլէնթունան գրկալ ամ, նա ալ ուզում ա ինձ գրկի:

— Հաջի, խեղթի հի՞նչ ա կտրւմ, սս պեաները հի՞նչպէս կըվերջանա. սարմ ան Բէյբութովը փրակորթին մեծ արգա ա տուալ:

— Բէֆթ քէօք պահի, Գէօզալ, ինձ Թա- ղիկ կասան, համ փող ունամ, համ անըմ, եքուց թիֆլիզիմը մի աղվակատ կըբոնամ

\*) Քոս չէս, տե՛ս «Պաթթրալի» № 33-ը:

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՓՈՐԻՉՄՆԵՐ

(Լէօ'ի)

Եւ կուգե՛մ վիշտ եւ լացել մի՛շտ  
Մութ երկնքի՛, գարշ հողմերի  
Հատաչի տակ՝ սրբոս կրրակ։—

Եւ կուգե՛մ լո՛ւտ, հեռո՛ւ, անկո՛ւր  
Անապատում, ցա՛ւն անհատնում  
Գրրկած կրրծքիս՝ ճըչայ հոգիս,

Եւ վայրենի գազանների  
Կանչրատոցը, լացն ու կոծը  
Սփոփէ ինձ միշտ էլ անջինջ...

Ա՛խ, երանի՛ մըրրիկների՛  
Բաժին դարձած՝ լինե՛մ ընկած  
Խօշ վիհերո՛ւմ, անկունդներո՛ւմ,

Վա՛խ, երանի՛ մարդուկների՛  
Քծնող լեզուց, կեղծ խորհրդից  
Կորչե՛մ հեռո՛ւ թափստերո՛ւ...

Եւ կուգե՛մ միշտ գրրկած ցաւ—վիշտ՝  
Ման գամ անվերջ փըշերի մէջ.—  
Դըրանք լա՛ւ են—մարդիկ վա՛տ են...

Նարգիզ



մին էլ կազամաթ կըշինամ, չի՛մ անցկը-  
կանա... Աթանց պեաներան արխէյին ամ:

Եւ վեր կացայ, կաննէցի, չարժօվս դիւ-  
զացրի, մնաս պարով ասեցի՝ քի դիւս կեամ,  
կոնաս փոնեց, աշկերը չոնց վերաս, ես  
վախացայ, վայ ինձ, մտէլմս ասեցի շատ  
ալ պառաւ կնիգ ամ, համմա հինչքան իլի  
թուրք ա, մըտիլը ծուալ ա, եաշիս աս վախ-  
արմը ինձ բիարու ա անիլու:

—Հաջի,—ասեցի ես, աշկերս տափը քի-  
ցիլով,—կոնաս քրախ տուր, ես...

—Էստի, Գէօզալ Աղաբաշի, տիւք ցէք  
չէս քիցալ մեզ, հինչ քի հարցրիր ես չի՛մ  
խօսքերիդ շողաքը տւամ. հիմի քինալիս ես  
«Խաթաբալի» մէչին կրես, տական կլխան  
տիւս տաս: Նստի ես ալ մի քանի պեաներ  
պիտի հարցունամ, ոտով կըքինաս, չի՛մ մին-  
ակի կըկիրես, իմ ասածներս ալ, քու ա-  
սածներքի ալ լիսածներքի ալ:

—Ասա, հաջի, ասա տեսնամ, հի՛նչ ես  
ուզում:

—Շատ լեաւ.—ասեց հաջին մուրուքը  
թումարիլով,—ես թուրք, կնիգս թուրք,  
Բէյբութովը թուրք, թագողներն ալ թուր-  
քեր, մին ասա տեսնամ աս հայերին հի՛նչ  
զոտ ա հասնըմ, քի՛ դրանք աս բան քշիչի

Բոնութեան զոհերը միշտ ամբոխի սրբե-  
րն են գարձել:  
Գա արդար օրէնք է...

Գազաններ որսալու համար այնքան ոյժ  
չեն գործադրում, որքան հնարագիտութիւն:

Կոխ մղել թշնամու դէմ—դա սրբագան  
պարտք է, բայց պատերազմել թէ թշնա-  
մու և թէ հանգամանքների դէմ—դա շատ  
դժուար, անհնարին բան է:

Փորձանքը ոչ ցերեկ է ճանաչում, ոչ գի-  
շեր. նա գալիս է ամեն ժամ, բայց մանա-  
ւանդ այն ժամանակ, երբ դու նրան չես  
սպասում:

Շներին, գայլերին և ուրիշ պատառոզ-  
ներին առելի է պաշտպանողութեան միտ-  
քը. նրանք մի բան գիտեն—ով խլում է  
նրանց պատառը՝ նա յանցաւոր է և պիտի  
զոհուի...

Երկիւղը—դա ստրուկներին անտանայ-  
նելու ամենալաւ միջոցն է:

Մարդը ստրուկ չպիտի լինի—սա յաւի-  
տանական սուրբ ճշմարտութիւն է:

Ամեն ինչ Աստուծոյ կամքին է կատար-  
ւում. բայց Աստուծո կամքն է և այն, որ  
չպէտք է քնել, չպէտք է խեղճ մնալ, լաւ  
մահը վատ կեանքից սիրուն է:

ան ընգնըմ, կազէթներըմը կիրիմ ան Ե-  
տով ես բաքուցի, Բէյբութովը դարաբադ-  
ցի, կնիգս ալ դադստանցի: Տա ալ աթանց:  
Ետով իմանում ես քի թուրքերի շեարիա-  
թըմը հաս-չհասի օրէնք չկայ, ախպօր տղան  
ախպօր ախշիզան հետնան, ախպօր կնիգը  
տեքօր հետնան, խեալի տղան խեալի ախ-  
շիզան հետնան օրէնքով, շեարիաթով քեա-  
քին ա իլիմ, փսակըմ ան: Համմա հայե-  
րըմը աթանց օրէնք, զակոն չկայ, օխտը  
պօրտան պակաս փսակը հարամ ա: Դիւզ  
ամ ասըմ, Գէօզալ բաշի:

—Հէանց իմանանք քի, (աստաֆուրու-  
լա) իմ կնիգս Բէյբութովի հետնան, ես  
Բէյբութովը կնգանս հետնան սիրահարաւ  
ան, (աստաֆուրուլա), հէանց իմանան քի  
երկուսն ալ շայիլ արախերք ան, մտկները  
ծուալ ա, (աստաֆուրուլա), երկուսն ալ  
եադեր ան, հինչպէս ասեցի, միններս բա-  
քուցի, մինը՝ դարաբալցի, մինը՝ դադս-  
տանցի, ոչ ազգական անք, ոչ խնամի, ոչ  
ալ մին հողի մարթ: Ետաշի,—դիւք քի ա-  
թանց պեաներին Փիքիր էք տամ, բա՛  
հի՛նչի չէք կիրիմ քի ծեր միլիօնչի Ա-  
ի տղաները իրանց ախպօրների, ամիօղլին-  
րի, հարսերի հետնան ա... բեաս հի՛նչի չէք

Կեղծիքը ծանր և անտանելի ցաւ է շի  
տակ և անարատ բնաւորութիւնների օրհն  
մար:

Թշուարը շուտ է հնարներ գտնում:  
Ժողովեց՝ Վ. Բար.

Սովածը երազում հաց է տեսնում, իսկ ծարա-  
ւը՝ ջուր:

Բժիշկը—խօսեալ, ժանդարա և ուրիշ հիւան-  
դութիւններ:

Փաստարանը—զողութիւն, սպանութիւն, ա-  
ւազակութիւն և այլն:

Վաճառակներ—լաւ բերք, բանկեր, մուրհակ-  
ներ:


Ճարտարագետը—բազմերով ժողովրդի և պե-  
տութեան փողը:

Ներսասարգներ—օժիտաւոր հարմացու:

Յիւրազներ—հարուստ փեսայու, թէկուզ ծեր:

Տիկիւններ—անփորձ տղաներ:

Սօսկերօներ—բիւրարգ, կարա, և գինեաւոր:  
Յիգօ



կիրիմ քի ծեր դօլլատիւ Բ.-ն իրան դայի  
կնգան հետնան ա... բեաս հի՛նչի չէք կի-  
րիմ քի, ծեր միլիօնչի Գ.-ի ախպօր տղան  
իրան ամիլի կնգան հետնան ա...  
Հ՞ը, Գէօզալ աղաբաշի, լիզութ փորքի ես  
կոխալ, հի՛նչի չէք կիրիմ: Ե՛ս ա, ք, գ.  
ալֆաւիտով տեղեկութուն ունամ, մին մին  
կասամ: Ծեր հայի միլիօնչիները քինամ ան  
կլուք, մինչև լիւս կարթ հաղ անըմ, պիա-  
նիցկութուն անըմ, համմա իրանց կնանիքը  
սկիօր կարաւաթի վերայ ընգած աօքոր  
տղի, իրանց նշանածների մօտ ազգական-  
ների հետնան թեափիզու ան հաղ անըմ:  
Հէալա չամ ասըմ քի իրանց ուպրաւիաշ-  
չիզների, փրկաշիկների, բուխալարների  
հետնան հինչ օյիններ ան հանըմ:

«Ծեր հարուստ Գ.-ի տղին դամաշի պե-  
տուլս ան ասըմ (տունի խորուզ): Տիւ շա-  
մախեցի ես, էյնամ կըհասկանաս, հի՛նչ ա-  
սիլ ա եզօմաշի պիտուխ... Մին խօսքով,  
գէօզալ, հայի միլիօնչիների կնանիքը ծմե-  
նը իրանց տուներըմը տասը լօթի ան պա-  
հըմ, համմա ամառնը հարուր տասը՝ Զէս  
հաւատըմ իմ խեարշովս քինա Պեախգորակի,  
Կիսլաւօղսկի, Աբասթու մանի, տես հի՛նչ  
օյիններ ան հանըմ:

Ինչպէս զանազանել

- Ասացէք խնդրեմ, ինչպէս պէտք է գտնազանել հին հաւը նոր վառիկից:
- Ատամներով:
- Չէ՞ որ հաւերը ատամներ չունին:
- Սեփհանն ատամներով:

Հայկական որոնումներ

- Մեր երկաթուղիները անպայման յարժարութիւններ չառ ունին. քանի երկաթը ճանապարհորդիս ամբարն աւելի արժանանում է տոմսակի գինը:
- Իսկ ինչքան երկար պիտ զնալ, որ բոլորովին ձքի տոմսակ առնա:

Մոռացածը

— Մի պարոն կարծելով թէ իր ծխատուփը մոռացել է մի ախիւնջ մօտ նստակ է գրում ախիւնջը հետեւեալ բովանդակութեամբ՝

«Աղնամեծար ախիւնջ.

Ձեր տանը մոռացմամբ թողի իմ ծխատուփը, բարի եղէք ինչպէս յանձնելու այն գրաբեր ծառայիս:

Յարգանքներով ... հանց

Նամակը վերջացրել, ծրարել էր, և աւել էր ծառայեմ, որ տանէ յանձնէ ըստ պատկանելոյն, բայց յանկարծ դտնում է կորցրած ծխատուփը. նա սեղանի վրայ է եղած թղթերի տակ. անմիջապէս զրնում է ծառայի ետեւից կանչուեմ է նրան ետ. և ծրարի վրայ, դրսից այս երկտողը աւելացնում.

«Յարգելի ախիւնջ, ներողութիւն միք կրի փնտռելու: Ես զտայ ծխատուփս, սեղանի վրայ էր:»

Յարգ. ... հանց

Ծրարը նորից տալիս է ծառային և ծառան յանձնում է ըստ պատկանելոյն:

Գործիչին



— Ազանամ տիւրք, հայերթ դիւզ մարթ էք, առաջ տիւրք ձեր պակասութունները արեգացէք, եղով խախիւնը «Քեաչալը ազանամ դեպքաթուն իմանա, տուայ իրան կըխին ճար կանխ»: Տեսաք, փառք Ալլահին, իմ կնգանս վերայ մին քիչ փիս խօսեցին, սուտ էր, տիւրք էր, դա Ալլահը կիմանա, համա իմ նամուս, զրեաթս ինձ սուեց աբու, թագի, չարչարի, ես ալ արիս մին միլիօն ալ կըխարջամ՝ ալի կանամ, չիւնքի նամուս ունամ, համան ձեր հայերթ անքան բեկրեաթ ան քի, զակոնով մարթա մին կնիգ ա հանրու, մին կնգան նամուսն ալ պանիլ չեն կարում: Մեր քեասիբացած գոբրատիս ... վեանցի կնգան օրը ցիբեկով ինգլիզ ինձնարը մարթի ձէռքան սուա, տարաւ իրան տունումը պահեց-պահեց, ետով ալ տրանա 10—12 տարի առաջ ձեր Հայրիկ կաթիկոսը քի Բարսեկաւ, Եւրոպային Բիթլիթում տասնը հինգ հասար մանէթ եմ աշքիս տալին իսպանաբոս տաւ և ձեր Հայրիկը Բարսե հայուն շարիաթով կնգան փոսկիլ արաւ Ինգլիզի հեանան... չէարց ա ստանաթիկ, ձեր միլիօնչի ախիւնջը մեր Հասանի տունը՝ մը չի սպարմ... բեգբաթ

Հ ե ո ա գ ի ր ն ե ր

(«Առթարալխտներ» գործակալ.)

Բազու I-ին օգոստ. 9 ժ. 40 ր.: Ապրանքատար (տաւարնի) գնացքով ճանապարհեց Գէօզալ Աղարաջին: Որպէսզի Բազուի կանայք և օրիորդները չիմանան, վարոն մտաւ մեծ կարգինկայի մէջ թագնւած: Ասում են, որ կարգինկայից դուրս կըգայ Բալաջարի կայարանում: Գէօզալի նըպատակը յայտնի չէ:

Շնաթաղցի Մօսունց կէորկ

Դերբենդ. 14-ին օգոստ. առ. ժամ. 5-ին: Այս լուսէլիս լուր տարածեց, որ Գէօզալ Աղարաջին ապրանքատար գնացքով անցիլ է դէպի Ռուսաստան: Դերբենդի կանայք պնդում են, որ եթէ Գէօզալ Աղարաջին քաղաք մտնէր և եթէ տղամարդիկ դուրս չանէին, իրենք լօկաուտ պիտի յայտարարէին իրենց ամուսիններին:

Խաթարալխտուհի

Բեւլան կայարան, 15 օգոստ. ցեր. 4 ժ. 5 րոպ.: Դեռ ստաւօտից լուր էր տարածել թէ Գէօզալ Աղարաջին ուղում է Վլադիկաւկաւղ մտնէ: Կանայք և օրիորդները՝ ստալնորդութեամբ Քէլան Շաքարօթի կէսօրեայ ժամի 12-ից շարժեցին դէպի Բէնլան կա-

յարան նպատակ ունենալով թոյլ շտալու քոնգրեսի մասին խիստ հիասթափեցին, երբ վագոնները շրջապատելուց յետոյ խուզարկութիւնը անհետեանք եղաւ, Գէօզալը չերեցաւ: Ասում են, որ լէզգու հագուստով է եղել:

Եզուպու

Միներալնի կայ. 16 օգոստ. 6 ժ. 3 րոպ.: Վլադիկաւկաւղից ստացւած հեռագրի շնորհիւ, շրջակայքից հաւաքելու են թուով 12,946 դաշնի կանայք և օրիորդներ: Ամբողջ կայարանը վխտում է. անր ու դարձի տեղ չկայ: «Բէ՛՛՛՛՛՛՛ չի կանանց կօմիտէն» թուցիկներ է յայտարարել, որով կոչ է անում բոլոր կանանց, որ չըխընային վերջին կաթիլ արիւնը անգամ և թոյլ շտան Գէօզալ Աղարաջուն գնացքից իջնելու: Ժանդարմների հարցին կանայք պատասխանում են, որ Ձէլիմ խանն է գաղտնի գալիս և իրենք ուղում են սպանել նրան: Գնացքը կանգ առնելիս գօրքով շրջապատեց, սկսեց խուզարկութիւն. բայց ոչ ոքի չերեաց: Թուում է, որ առաջին կայարանից Գէօզալ Աղարաջին ապրանքատար գնացքից իջնելով նստել է արագընթաց գնացք և 12 ժամ առաջ նա Պետադրոսկ է մտել: Լաւատեղեակ շրջաններում համոզւած են, որ եթէ այս անգամ էլ Գէօզալին յաջողի

ցի Փայթոն դիւզ քիլ տւի Օրբուժ-Մարշի մօղազինը, մին դանա գօնթիգ, մին շապ, մին քամի տալի վիներ, մի բաշմակի, դուրի, պուգրի, օթիկօլօն, ախրքի հինչքի բարիշնաներին հարկաւոր ա, չեմ առի, պիւղացրի եաշիգի մէջ, դիւս եկայ: Եղով մին դեատտ ալ մօղնի շօրեր առի, քինացի տուն:

Դէ, Դեատպար ջան, երուց ճանապարհը ամ, օկոստոսի 13-ն ա, շատ լիաւախտ ա, քինամ-կեամ շատ պեանիլ կըկիրամ: Մի սաֆար ա ս բէնամուս տղամարթգերքոնց և ճիւրները կակող հայաւրդ կաննիքոնց հետնան պեան շատ ունամ: Յունիս յուլիս միտներն Բարուան ամ իտարը հաւաքալ, օկոստոսին ալ Պետադրոսկիան ամ հաւաքիլ:

Մտամ քիգ թամարյու քու քիւրացու՝  
Շամախեցի այրի ախիլին  
Գեօզալ Աղարաջի



մարթը կըխ վերկարած քինաց, կնգանն ալ Հեասանը տարաւ, արախօրսոնց ալ կարթացնում ա:

«Որ միւրը ասամ, ազանամ մին-մին տամ, սաղ «Առթարալու» տեղ չի իլիլ անըմները կիրես:

«Ուրեմն աթանց, Գէօզալ Աղարաջի, սսածներս, լիւսածներթ չեմ կի կիրես, եօխսանամ չե, քեղ ալ քու կարատուգովիթ հեանան Բէյբուլթովի օրը քիցիլ կըտամ...»

— Բաշ ուստա, հաջի, իմ պարտքս ա կիրիլ:

Ես վեր կացա, չարչօվս պիւղացրի, մնաս պարով ասեցի որ տիւս կեամ, հաջին մտաւ ան մին օթադ, ստօլի եաշիգի պեացից, հինդ դանա Եկատերինս հարուստնոցնր ցեքին պերաս, ձարց, տաւ ցէքս, ա սիրով:

— Գէօզալ աղարաջի, Բարուն շատ տար ա, տիւ ալ պոտու կնիգ, առ տա խարչաւդ, քինա՝ Պետադրոսկիի թեարաթի դաչերը, մի խէլաք իտարները հաւաքի դաչաւը կաննիքոնց, մարթիգերքոնց ամա, ետով քի եա կեաւ Բարու, մին-մին «Առթարալու» մէջին կի կիրես:

Փողերը տիբի շիբիս տիւս եկայ, նստե-





—Սուպիկ—ես գրելից ելնանել կրկտրատիմ մնլատով—իսկ դու գումերլսքիկով կացլու, յետոյ մնը դրքտոլներ ու փիլիսոփաներ կըղավնար:

(Նւէր արտասանմանեան հայ ուսանողներին և դոքտորութեան պրեկտորներին):

ՕՏԱՐ ԻԻՄՕՐ



Բարոյսականագէտը

—Թանգարժէք իբր ես առնասարակ ննջարանումս չեմ պահում, որովհետեւ ով առես այստեղ մանուկ է և կարող է գողանալ—իսկ գողութեանը՝ ես զրդած կըլինեմ:



Ետսպում է...

—Ա՛խ, Աստուած իմ. մարդս վրայ հասաւ այս ուր էք ինձ բերել:

—Մի վախենա՛ք, սիրելիքս, մարդս կերեայ թէ շտապով գործ ունէ որեւէ անոց, և այլպէս վտաղ թոչում է:

կանանց գաղտնիքները բացել, առաջիկայ ամառը ոչ մի կին հանքային ջրերը չպիտի գայ: Կանայք վեց խմբերի բաժանելով, ոտքով դիմեցին դէպի Պեատիգորսկ, Գէօզալ Աղաբաջուն ձերբակալելու, կամ նրանից ստորագրութիւն առնելու, որ կանանց մասին ոչ մի տեղեկութիւն չգրի «Սաթարալում»:

Տաթևացի Ստեփան

Պետիգորսկ. 17 օգոստ. 12 ժ. ցեր.: Առևտուրը կանգնած է, խանութները փակ են բացի հացալաճառներից, որոնց վրայ հակում են հեծնալ պահակները: Կանայք և աղջիկները, մանաւանդ բազեցիք, լցւած են փողոցները. նրանք ամեն անց ու դարձ անողներին խուզարկում են գրտնելու նոր եկած Գէօզալ Աղաբաջուն: Հիւրանոցատէրերին, որոնք տեղ կրտան Գէօզալին, վճուած է կանանց կողմից տէրոր: Փողոցները ծածկւած է թուղիկներով:

Սպասուում են խիստ բարդութիւններ:

Բուրասոյ մաստեր Աամէս:

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

ԿՈՐՄԱՆԺ Է յունիսի 19—20-ին

ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԲՐՕՇԻՐ

Մ Ա Ր Ի Կ

**«ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ԼԻԱՆ»**

Գտնողին խնդրում են թողնել «Սաթարալում»-ի խմբագրատանը, գոհացուցիչ վարձատրութեամբ: 10—5

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Ս. ՉԷՐՔԷՉԵԱՆԻ

**ՕՐՄԱՆԵԱՆԸ**

ՉՐՊԱՐՑՈՒԹԵԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

Դիցն է 30 կոպ.

Դիմել՝ «Հովիտ»-ի խմբագրութեան և գրավաճառներին: 0—25

Բ Ժ Ի Ե Կ

**ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ**

Մամադխաութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր ծանփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28. 000—144

ИЗДАНИЕ  
ОБОМ

Նորագոյն նկարներով հակայական քանակով ճոճ-ըմբռնող

ՍՏԱՅԻԱՆ Է

Ե. Յ. Ծ Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի

Գ Է Պ Օ Յ Ո Ւ Մ

որակի և վաճառում է գործարանային գներով:

Թիֆլիս Դիօրցովաեա փողոց:

50—28

А Т Р П Е Т Ъ

1. Мамед-Али-Шах

Народное движение въ Персіи ЦѢНА 1 РУБ.

2. Рахим-Хан

Смуты въ Персіи ЦѢНА 20 КОП.

3. ИМАМАТЪ, государственный строй и религиозное возрѣніе въ Персіи, цѣна 1 руб.

4. БАБИТЫ и БЕХАЙТЫ

Новое религиозное теченіе и ученіе въ Персіи цѣна 60 коп.

Во всѣхъ книжныхъ магазинахъ. 00—14

Ա Ր Հ Ե Մ Ս Ա Ն Ո Յ Ը

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՅԸ

Վելիամինովսկայա փողոցից ՏԵՂԱՓՈՒԵԻՆՑ Երևանեան հրատարակ, թարգմանի տուն՝ «Кавказъ» թերթի նախկին խմբագրատունը—Առաջին Փոխադ. Վարկի Ընկ. կից:

Արևեստանցում ընդունում են պատերներ տղամարդկանց ամենաճաշակաւոր զգեստներ կարելու ուսական և արտասահմանեան ապրանքներից:

Որոնք ստացւում են շաբթէ-շաբաթ՝ և անմիջապէս:

Գ Ն Ե Ր Ը Մ Ա Տ Չ Ե Լ Ի

0—7

**ТИФЛИССКОЕ**

2-е восьмиклассное Коммерческое училище

СЪ ПРАВАМИ

Объявляетъ, что переводныя испытанія будутъ произведены 26 и 27 августа и пріемныя 31 августа 1, 2 и 3 сентября. Въ младшія отдѣленія пріготовительн. класса принимаются дѣти безъ экзамена. Канцелярія открыта ежедневно отъ 10 ч.—1 ч. дня. Панасевича ул. 8 уч. соб. д. № 38. 2—2



ՅԵՐԱԿՆԵՅՑԻՈՆ  
ՅՈՒՑՊՈՒՄՈՅՅՅ

40 օր | ՉՏԻ |



# Բ Ե Ս Տ Ո Ր Ա Ն - Ճ Ա Շ Ա Ր Ա Ն „ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայրմար տեղ Թամամշեան  
քարվանսարայի տակ

## ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՅ

— Երոսպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կարինեա-սենեակներ մաքուր խո-  
հանոց ու պատրաստակամ ծառաներ

25—17



# Первокл. ресторажъ „АННОНА“



„Здание Артистического Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час.  
пополудни и вечеромъ отъ 10 час.  
до 2-хъ час. ночи. играетъ **ВЧОВЬ** приглаш. итальянскій струнный ор-  
кестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—г-жи Сакко и Марія Оландезе и  
баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САРКО.

**ЗАВТРАКИ**, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2  
час до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60,  
трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня-Европейская и Азіятская;  
билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“

52—17



— Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառուով է —

Ն Ա Ր-Դ Ո Ս

# ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

Գրքեր Է 75 կողմի

Գլխավոր պահեստը «Գուտտենբերգ» գրախա-  
նութուն, ուր և գրմուս են գումարով զնորները:

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարգալ և զրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները թեկամ են),

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՉԵՆՈՒՄ

սոր ձեռնարկի գինը ճանապարհածախ-  
կով վերադիր վճարով արժէ 1 ր. 10  
պ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—  
Մ 2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.:

Պատւէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար: С. Петербургъ, Петербургск. сторуна Большой пр. № 56—609, Я. К. Петерсь. 482 00—15

Ի-ԻՆ Խ Ո Ղ Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն

## Կ Ո Ւ Ր Ս Ե Ր

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-  
ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ՃԱՇԻ» ինքնու-  
սուցման համար. մօտ 1000 ընչէպտ  
կերակուրների, խմիչքների, թխածք-  
ների, կօմպօտի, մուրաբաների քաղց-  
րեղէնների և կարկանդակների և այլն:  
300 երես խիտ սպազրած, գինը ճա-  
նապարհածախսով վերադիր վճարով 2 ր  
60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնա-  
ւոր կերպով տանել տնային սնտեսու-  
թիւնը և պատրաստել տնային համեղ  
ու սննդարար ճաշ, միւր կոտորելու և  
սեղանը զարդարելու մասին յաւելա-  
ծով, մօտ 100 երես, նկարներով: Գինը  
1 ո. 20 կ., երկու գիրքը միասին 3  
ո. 35 կ. (կարելի է մարկաներով):  
պահանջներով գրմել բացառապէս Я.  
бурск. рсу, С.-Петербургъ, Петер-  
К. Петесторона, Большой просп.  
№ 56—609, 483 0—15  
(Խ. Տ. Չ.)

## ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ՉՐԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!

Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, տրի-  
պերով, շանկերով, սեռական թուլու-  
թեամբ, կամ Չեր առողջութիւնը քայ-  
քայլած է ձեռնականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան  
գաղտնի հիւանդութիւնների տղամար-  
դու, կանանց միզասեռական օրգաննե-  
րի», նկարներով և բազմաթիւ ըն-  
ցէպտներով մօտ 250 երես: Գինը ճա-  
նապարհածախսով ու վերադիր վճարով  
1 ր. 30 կողմ: «Ժողովրդական բժշկա-  
րան-ձեռնարկ», չափահասների և ամեն  
տեսակ հիւանդութիւններ բժշկելու  
համար, բացի գաղտնի հիւանդութիւն-  
ներից, առանց բժշկի օգնութեան մօտ  
400 երես. գինը ճանապարհած. վերա-  
դիր վճարով 1 ր. 40 կողմ: Երկու գիր-  
քը միասին 2 ր. 50 կողմ. (կարելի է  
մարկաներով): Միակ պահեստը С.-  
Петербургъ, Петербург. сторуна,  
Большой просп. № 56—609 Я. К.  
Петерсь 484 (Խ. Տ. Չ.) 0—15



«სიბავშვობა»-ის მიხედვით აღმართულია ეს

საქართველოს საბავშვო ჟურნალი